ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

26.05.2022 – 20.07.2022 թթ. Ժամանակահատվածի համար

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից գլխավոր քարտուղարի և /կամ/ բաժնի պետի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների /այսուհետ՝ ՊՈԱԿ/ 2022 թվականի կարիքների համար չկայացած չափաբաժինների մասով սննդամթերքի /ք. Երևան և Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք/, հանդերձանքի և անկողնային պարագաների /«Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտերնատ»/ կենտրոնացված կարգով՝ «գնանշման հարցում» գնման ընթացակարգերի կազմակերպում և ամփոփում, գնահատող հանձնաժողովի քարտուղարի պարտականությունների իրականացում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 31-ի թիվ 411-Ա որոշումը,
- Էկզոսկելետոն աջակցող միջոցն անհատույց՝ 3 տարի ժամկետով վերականգնողական կենտրոնին տրամադրելու նպատակով հայտարարված «Վերականգնողական կենտրոնի ընտրության» մրցույթի կազմակերպում, անցկացում, գնահատող հանձնաժողովի քարտուղարի պարտականությունների իրականացում, արձանագրությունների կազմում, պայմանագրի նախագծի մշակում, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2022 թվականի հունիսի 29-ի N 81-Ա/1,
- Նախարարության 2022 թվականի կարիքների համար կահույքի պատրաստման աշխատանքների՝ «գնանշման հարցում» գնման ընթացակարգի կազմակերպում և ամփոփում, գնահատող հանձնաժողովի քարտուղարի պարտականությունների իրականացում,

- Նախարարության կողմից օգտագործվող օդորակիչների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների՝ «գնանշման հարցում» գնման ընթացակարգի կազմակերպում և ամփոփում, գնահատող հանձնաժողովի քարտուղարի պարտականությունների իրականացում,
- Նախարարության 2022 թվականի կարիքների համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Արարատի կամ Արմավիրի մարզում «18 տարեկանից բարձր տարիքի անձանց համայնքային փոքր տներում խնմաքի կազմակերպման համար անշարժ գույքի ձեռքբերում» միջոցառման շրջանակում 18 տարեկանից բարձր 10-12 անձանց խնամքի կազմակերպման համար համայնքային փոքր տան՝ «էլեկտրոնային աճուրդ» գնման ընթացակարգերի կազմակերպում և ամփոփում, գնահատող հանձնաժողովի քարտուղարի պարտականությունների իրականացում,
- Գնման ընթացակարգերի հայտարարության տեքստերի /հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով/, գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին հրամանների, ինչպես նաև պարտադիր հրապարակման ենթակա փաստաթղթերի նախագծերի կազմում և ներկայացում հաստատման,
- Գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկված ՊՈԱԿ-ների աշխատակիցներին մեթոդական օժանդակության ցուցաբերում՝ էլեկտրոնային եղանակով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու, գնման հայտերում արձանագրված անճշտությունները շտկելու, գնումների մասին ՀՀ օրենսդրության հետ կապված այլ հարցերի մասով,
- Գնման ընթացակարգերի հայտարարման նպատակով աշխատակարգային տվյալների մուտքագրում գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության էլեկտրոնային ենթամոդուլ /ppcm/ համակարգ, անցում կատարելով eauction.armeps.am կամ armeps.am համակարգեր,
- Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով մակագրված հանձնարարականների կատարում, գրությունների կազմում, շջանառում,

- Կնքված պայմանագրերի մուտքագրում գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության էլեկտրոնային ենթամոդուլ /ppcm/ համակարգ,
- Դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության պայմանագրի կատարման մասին ամենամսյա ամփոփ արձանագրությունների կազմում, ներկայացում հաստատման:

Գնումների համակարգման բաժնի փորձագետ՝ Լ. Մկրտչյան

20.07.2022թ.

Կարարիչ տնօրենի գնումների գծով տեղակալ Կ. Մելքյան